# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶՊԵՏ

<< 16 >> <<հունիս>> 2016 թ N 58
ք. Եղեգնաձոր

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ԹԻՎ 73 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2015 թվականի հունիսի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության դպրոցներին ամրացված անշարժ գույքի ( Շենքեր և շինություններ) հանձնման –ընդունման մասին>> թիվ 73 կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Վերնագրում <<Դպրոցներին>> բառը փոխարինել <<պետական ոչ առևտրային կազմակերպություններին>> բառերով.

2) Կարգադրության 1. Կետի <<դպրոցների (ՊՈԱԿ-ների)>> բառերը փոխարինել <<պետական ոչ առևտրային կազմակերպությունների>> բառերով.

3) Կարգադրությամբ հաստատված հավելվածի վերնագրում <<Դպրոցներին>> բառը փոխարինել <<պետական ոչ առևտրային կազմակերպություններին>> բառերով, 5.կետի <<Գասպարյան Ժիրայր>> բառերը փոխարինել <<Հարությունյան Հուսիկ>> բառերով.

4) Կարգադրությամբ հաստատված հավելվածի <<հանձնաժողովի անդամներ>> բառերից հետո լրացնել նոր՝
<< 1.1. Գևորգյան Խաչիկ- Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ>> կետը.

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից.

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ